02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

48 (1447) • 20 դեկտեմբերի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

# Մտորումներ Ամանորից առաջ

Մոտենում են Ամանորի տոները, եւ գազասարքավորումներն առավել ծանրաբեռնված են լինելու: Տոնական եռուզեռն ու տրամադրությունը չխաթարելու կարեւոր պայմաններից մեկը նաեւ անվտանգության կանոնները պահպանելն է:

Այս օրերին հաճախակի են դարձել գազասպասարկման ծառայությունների աշխատակիցների այցելությունները բնակարաններ: Դա լավ է, եթե, իհարկե, այցելությունները ձեւական բնույթ չկրեն, միայն իբր կատարած աշխատանքի մասին նշումներ չլինեն, այլ այդ աշխատանքը կատարվի պատասխանատվության գիտակցումով, խղճի մտոք: Որ ոչ մի ընտանիքում տոնը չխաթարվի...

Անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքներ թողարկելն ու վաճառելը, ինչպես եւ աշխատանքներ կատարելը կամ ծառայություն մատուցելը քրեորեն պատժելի արարք է, մինչդեռ չպատժված անփույթն ու անպատասխանատուն էլ շարունակում են նույնքան անորակ ու վտանգավոր աշխատանք կատարել կամ ապրանք թողարկել՝ արհամարհելով սպառողի շահերը:

Քրեական օրենսգրքի 279 հոդվածի նկարագրական մասում ասվում է՝ սպառողների կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքներ թողարկելը կամ իրացնելը, աշխատանքներ կամ ծառայություններ մատուցելը կամ նշված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների՝ անվտանգության պահանջներին համապատասխանությունը հավաստող պաշտոնական փաստաթղթերն ապօրինի հանձնելը կամ օգտագործելը, եթե արարքներն անզգուշությամբ վնաս են պատճառել մարդու առողջությանը, ենթարկվում է համապատասխան պատժի:

Օրենքը, պատճառված վնասի չափից ելնելով, տարբեր պատիժներ է սահմանում: Պատիժն առավել խիստ է, եթե, ասենք, անվտանգության պահանջներին չհամապատասխանող աշխատանքի կամ ծառայության պատճառով մահ է առաջացել, կամ եթե նման վերաբերմունք դրսեւորվել է մանկահասակների համար նախատեսված ապրանքներ պատրաստելիս: Օրենքն այս դեպքի համար առավելագույնը մինչեւ հինգ տարի ժամկետով ազատազրկում է նախատեսում:

էջ 3

## Դանակահարել էր համագյուղացիներին

Դեկտեմբերի 15-ի գիշերը ոստիկանության Գորիսի բաժնում ահազանգ ստացվեց, որ Սյունիքի մարզի Խնածախ գյուղում դանակահարություն է եղել:

Դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ համագյուղացիները կենցաղային պատճառներով վիճել են: Օպերատիվ կերպով պարզվեց միջադեպի մասնակիցների շրջանակը: Հայտնի դարձավ, որ մասնակիցներից 22-ամյա երիտասարդը դանակահարել է 37-ամյա եւ 33-ամյա երկու տղամարդու:

Հանգամանքները հիմնավորվեցին փաստական տվյալներով, ինչից հետո Գորիսի ոստիկանները սկսեցին կասկածվողին հայտնաբերելու միջոցառումները: Զուգահեռ տարված բացատրական աշխատանքի շնորհիվ դեպքից ժամեր անց 22-ամյա երիտասարդը ներկայացավ ոստիկանության Գորիսի բաժին ու խոստովանական բացատրություն տվեց:

Հարուցվել է քրեական գործ:

Կատարվում է քննություն:

## Վնասել էր արագաչափի սարքերը

Դեկտեմբերի 14-ին ոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում էր ստացվել, որ դիտավորությամբ կոտրել են Արշակունյաց պողոտայում տեղադրված արագաչափ սարքը:

Ոստիկանության Մաշտոցի բաժնում եւս նույնաբովանդակ հաղորդումներ ստացվեցին: Մի դեպքում դիտավորյալ կոտրել էին Հալաբյան փողոցի, մյուս դեպքում՝ Լենինգրադյան փողոցի արագաչափերը:

Ոստիկանության Մաշտոցի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ միջոցառումները դեպքերից ժամեր անց արդյունք տվեցին: Ոստիկանների տեսադաշտում հայտնվեց 33-ամյա մի տղամարդ: Նա բերման ենթարկվեց ոստիկանության Մաշտոցի բաժին, որտեղ խոստովանեց, որ ինքն է երկաթե մահակով կոտրել արագաչափ սարքերի ապակիները:

Նյութեր են նախապատրաստվում:

## Բացահայտվել են ապօրինություններ

Ոստիկանության եւ ԱԱԾ փոխգործակցության արդյունքում բացահայտվել են ոստիկանության ծառայողի թույլ տված ապօրինությունները: Տեղեկությունների հիման վրա ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացված ուսումնասիրությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ ոստիկանության Կենտրոնական բաժնի թույլտվության համակարգի ավագ տեսուչը քաղաքացիների անվամբ գրանցված զենքերը պահելու եւ կրելու թույլտվության ժամկետների երկարաձգման ու զենքերն այլ անձանց անվամբ հաշվառելու գործընթացները կազմակերպել է առանց համապատասխան ընթացակարգերի պահպանման՝ կատարելով ապօրինի գործարքներ: Պարզվել է նաեւ, որ ոստիկանության մայորը ապօրինի կերպով երկարաձգել է Հայաստանից բացակայող քաղաքացիների զենքերը պահելու եւ կրելու թույլտվության ժամկետները, երբեմն քաղաքացիների փոխարեն ինքն է ձեռք բերել բժշկական փաստաթղթեր:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ ծառայողական քննության արդյունքում փաստական տվյալներ են ձեռք բերվել կաշառք տալու եւ ստանալու, ինչպես եւ փաստաթղթերի կեղծիք կատարելու առերեւույթ հանցագործությունների վերաբերյալ: Ծառայողական քննության նյութերն ուղարկվել են հատուկ քննչական ծառայություն:

## Չարաշահումներ համայնքապետարանում

Ոստիկանության Գորիսի բաժնում ստացված օպերատիվ տեղեկությունների հիման վրա փաստական տվյալներ են ձեռք բերվել Սյունիքի մարզի Կոռնիձոր համայնքում կատարված մի շարք ապօրինությունների վերաբերյալ:

Ըստ քննությանն այս պահին հայտնի տվյալների՝ կեղծ արձանագրության հիման վրա 2016 թվականին Կոռնիձոր համայնքի արոտօգտագործողների միավորման նախագահ է նշանակվել հենց համայնքի ղեկավարը, որն իրեն ամրագրել է որպես միավորման միակ վարձու աշխատող: Այնուհետեւ համայնքի կարիքների համար ձեռք բերված 12 միավոր գյուղատնտեսական տեխնիկան օգտագործել է անձնական կարիքների համար:

Պարզվել է, որ 2017-2018 թթ. ընթացքում համայնքի ղեկավարի եւ այլ անձանց պատկանող վարելահողերում համայնքին պատկանող գյուղատնտեսական տեխնիկայով կատարվել են մի շարք աշխատանքներ: Հիշյալ ժամանակահատվածում Կոռնիձոր համայնքի ղեկավարը Տեղ համայնքի հետ կնքել է աղբահանություն իրականացնելու պայմանագիր եւ կատարված աշխատանքների դիմաց ստացած 4 միլիոն 960 հազար դրամը յուրացրել է:

Հարուցվել է քրեական գործ:

## Բացահայտում են Մարտունու ոստիկանները

Դեկտեմբերի 13-ին ոստիկանության Մարտունու բաժնում բնակարանային գողության վերաբերյալ հաղորդում ստացվեց: Դեպքի վայր՝ Արծվանիստ գյուղ մեկնած օպերատիվ-քննչական խումբը պարզեց, որ տուն են մտել պատուհանով եւ գողացել մոտ մեկ միլիոն դրամ եւ 10 գրամանոց ոսկյա շղթա:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում Մարտունու ոստիկանները փաստական տվյալներ ձեռք բերեցին, որ գողությունը արել է Երեւանի բնակիչ, 18-ամյա մի աղջիկ: Նա հայտնաբերվեց ու ոստիկանությունից ներկայացվեց տարածքային քննչական բաժին:

Կատարվում է նախաքննություն:

### Խնամիաբարեկամական կրքեր

*Դամաձայնության եկան, որ պարտքի դիմաց իր նորակառույց շինությունը ձեւակերպի խնամու անունով:*

էջ 2

### Բռնվեց շորթելու պահին

*Արատավորող տեղեկություններ հրապարակելու սպառնալիքով կնոջից շորթել էր ոսկյա զարդեր եւ փող:*

էջ 3

### Մահվան ռեժիսորը

*Դանցագործություններ կատարելիս օգտագործում էր ուժեղ ազդեցությամբ հոգեմետ դեղեր:*

էջ 5

Համակարգ

# Անցում ուժեղացված ծառայության

Դեկտեմբերի 11-ին ճանապարհային ոստիկանությունում տեղի ունեցավ աշխատանքային խորհրդակցություն, որը վարում էր ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Եգոր Կարապետյանը: Նա ճանապարհային ոստիկանության բոլոր ստորաբաժանումներին հանձնարարեց դեկտեմբերի 14-ից անցնել ուժեղացված ծառայության: Նպատակը նախատոնական եւ տոնական օրերին հանրապետությունում անվտանգ երթեւեկության ապահովումն է:

Մայրաքաղաքի գրեթե բոլոր խաչմերուկներում եւ հանրապետության բոլոր ճանապարհներին 24 ժամ ծառայություն կիրականացնեն ճանապարհային ոստիկանության կարգախմբերը:

Եգոր Կարապետյանը հանձնարարեց ներողամտություն չցուցաբերել հատկապես ոչ սթափ վիճակում գտնվող եւ երթեւեկության կանոնների կոպիտ խախտումներ անող վարորդների նկատմամբ:

Ճանապարհային ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի անձնակազմին ցուցում տրվեց տոնական եւ նախատոնական օրերին իրականացնել անխափան ծառայություն, պատասխանել եւ ուղղորդել բոլոր զանգողներին:

Հաշվառման եւ քննական ստորաբաժանումների ղեկավարությանը հորդորվեց բացառել կոռուպցիոն որեւէ դրսեւորում, մատուցել միայն բարձրորակ ծառայություն:

Հանրապետության սահմանային անցակետերում ծառայություն իրականացնող ճանապարհային ոստիկաններին ցուցում տրվեց հետեւել համազգեստի կոկիկությանը, քաղաքացիների հետ շփումներում լինել գրագետ ու բարյացակամ:

Խորհրդակցությանը քննարկվեցին նաեւ ճանապարհային ոստիկանության ծառայությանը, իրավական եւ կադրային քաղաքականությանը վերաբերող այլ հարցեր եւս:

**Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ**

# Դիմեք ոստիկանություն

Մոտենում են տոնական օրերը: Զուգահեռ ավելի լսելի են դառնում փողոցներում տարբեր տեսակի ճայթիչ-պայթիչների ու հրավառության ձայնը:

Այս առնչությամբ ներկայացնենք որոշ նկատառումներ:

Նախ՝ հրագործական առարկաները վտանգավոր են առողջության ու կյանքի համար: Դեպքեր են եղել, որ դրանց սխալ օգտագործման հետեւանքով այրվածքներ ու վնասվածքներ են ստացել ինչպես չափահասներ, այնպես էլ անչափահասներ: Սխալ իրականացված հրավառության պատճառով տուժել են նաեւ շենքի բնակիչներ, վնասվել են մեքենաներ եւ այլն:

Հրավառություն կազմակերպելիս նախեւառաջ պետք է պահպանել անվտանգության կանոնները, թույլ չտալ անչափահասներին իրականացնել հրավառություն:

Նշենք, որ հասարակական կարգի դեմ ուղղված իրավախախտումներից մեկը լռությունը խախտելն է: Այն որպես զանցանք ներառված է վարչական իրավախախտումների

օրենսգրքում: Օրենսգրքի 180-րդ հոդվածով արգելվում է խախտել լռությունը գիշերային ժամանակ՝ ժամը 23-ից 7-ը:

Բացառություն է սահմանված միայն Ամանորի գիշերվա համար:

Հարգենք մեր համաքաղաքացիների իրավունքները, մեր հակաօրինական գործողություններով չսահմանափակենք նրանց ազատությունը:

Ոստիկանությունը ակնկալում է քաղաքացիների աջակցությունն ու օժանդակությունն այս հարցում: Եթե ականատես եք լինում նման անօրինական արարքների, խնդրում ենք անմիջապես զանգել ոստիկանություն:

Բոլոր օրինախախտները կհայտնաբերվեն եւ կենթարկվեն պատասխանատվության:

# Խնամիաբարեկամական կռիվներ

Խնամիաբարեկամական ջերմ հարաբերություններն այնքան կարճ տեւեցին ու այն աստիճան սրվեցին, որ բանը հասավ ոստիկանություն:

Գուրգեն Ազատյանն ու Սարգիս Մխիթարյանը համագյուղացիներ են: Երեք տարի առաջ Գուրգենի որդին՝ Սուրենը, ամուսնացավ Սարգսի դստեր՝ Անուշի հետ: Հարսանիքից երեք-չորս ամիս անց, երբ դեռ ջերմ հարաբերությունների մեջ էին, Սարգիսը Գուրգենից պարտքով տասնհինգ հազար դոլար խնդրեց: Գուրրգենն ընդառաջեց խնամուն, բայց համաձայնության եկան, որ փողի դիմաց Սարգիսը իր նորակառույց շինությունը ձեւակերպի խնամու անունով, մանավանդ որ, Սարգսի ռուսաստանաբնակ որդին միտք չուներ վերադառնալ Հայաստան:



Այդ ընթացքում խնամիներն ընդհանուր ուրախություն ունեցան՝ թոռնիկ ծնվեց: Բայց «սեւ կատուն» արդեն անցել էր նրանց արանքով: Հարս ու սկեսրոջ հարաբերությունները սրվել էին, վեճերը դարձել էին մշտական:

Մի օր էլ Անուշը հերթական վեճից հետո դստեր հետ գնաց հայրական տուն: Ամուսինը հետեւեց նրան, ու նորաստեղծ ընտանիքը բնակություն հաստատեց վիճելի տանը, որը դե յուրե Գուրգեն Ազատյանինն էր, դե ֆակտո՝ Սարգիս Մխիթարյանինը:

Թվում է՝ խնամիները գոնե հիմա կարող էին ընդհանուր համաձայնության գալ, փոխզիջման եզր գտնել: Բայց երկուստեք նման նախաձեռնություն չցուցաբերեցին, ավելին՝ հարցն այնքան սրեցին, որ տեղափոխեցին քրեական դաշտ:

Տեսնելով, որ Սարգիսը խուսափում է տան հետ կապված ձեւակերպումներ անելուց, Գուրգենը իր բեռնատարը բարձեց կենցաղային իրերով ու կրտսեր որդու եւ կնոջ հետ գնաց բնակվելու այն տանը, որն իրենն էր համարում, իսկ խնամի Սարգիսը՝ իրենը, եւ որտեղ արդեն բնակվում էին ավագ որդին, հարսն ու թոռը:

Իրերը բեռնաթափեցին բակում ու սկսեցին տեղափոխել տուն, բայց հարսն ընդվզեց՝ նրանցից էր փախել, հիմա եկել՝ ի՞նչ են ուզում: Իսկ Գուրգենի ուզածը հստակ էր՝ եկել էր իր տանն ապրելու, բայց ո՛չ Սարգսի աղջկա հետ:

Անուշը լուրը հասցրեց հորը: Նա էլ, որ հարեւանի տանը մի երկու բաժակ օղի էր խմել, եկավ կռվի տրամադրված: Եվ խնամիները, որպես հազար տարվա թշնամիներ, միանգամից հարձակվեցին իրար վրա...

Ուժերն անհավասար էին. Սարգսի կողմից էին հարեւանն ու փեսան՝ Գուրգենի որդին: Տեսնելով, որ պարտվում է, Գուրգենը բեռնատարի սրահից վերցրեց պլաստմասսե տարայով բենզինը եւ շաղ տվեց հակառակորդ կողմի վրա՝ սպառնալով, թե կվառի...

Տգեղ տեսարանը՝ գոռում-գոչյուն, հայհոյանք, ծեծկռտուք, շարունակվեց կես ժամից ավելի, մինչեւ հարեւանների ահազանգով ժամանեցին ոստիկանները եւ խնամիներին բերման ենթարկեցին ոստիկանություն:

Խուլիգանության փաստով քրեական գործ է հարուցվել:

**Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ**

# «Բարեգործական» յուրացում

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում ստացված օպերատիվ տվյալների հիման վրա նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ձեռք բերվել «Աջափնյակ» բարեգործական հիմնադրամի տնօրենի ապօրինությունների վերաբերյալ:

Ըստ քննությանն այս պահին հայտնի տվյալների՝ հիմնադրամի տնօրենը 2016 թվականին Աջափնյակի մանկապարտեզներից մեկի նորոգման համար հատկացված գումարներից հիմնադրամի դրամարկղից ելքագրել եւ յուրացման եղանակով հափշտակել է 1 միլիոն 960 հազար դրամ:

Բացի այդ, 2012-2016 թթ. հիմնադրամի միջոցներով ֆինանսավորել է Երեւանի քաղաքապետարանի եւ Աջափնյակ վարչական շրջանի վարչակազմի մասնակցությամբ տարբեր ռեստորանային համալիրներում կազմակերպված խնջույքները, ինչի հետեւանքով հիմնադրամին պատճառվել է 8 միլիոն 970 հազար դրամի վնաս:

Նյութերի նախապատրաստման ընթացքում հիմնադրամի տնօրենը վերականգնել է հիմնադրամին պատճառված 10 միլիոն 930 հազար դրամից ավելի վնասը:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

# Կասկածյալների ինքնությունը հշտվել է

Դեկտեմբերի 10-ին ոստիկանության Կենտրոնական բաժին ահազանգ է ստացվել, որ ՌԴ մի քաղաքացու իր տանը ծեծել են եւ դանակով խփել ոտքին: Նույն օրը հաղորդում է ստացվել նաեւ հիվանդանոցից, որ ազդրի կտրած վերքով իրենց մոտ բուժօգնության է տեղափոխվել ՌԴ քաղաքացի, 21-ամյա մի երիտասարդ եւ հայտնել է, որ երկու անձի կողմից ծեծի է ենթարկվել եւ դանակահարվել:

Մեկնած օպերատիվ-քննչական խումբը պարզել է, որ երկու երիտասարդ բնակարանում ծեծի են ենթարկել տղամարդուն, կապել են նրա ձեռքերն ու ոտքերը, դանակի սպառնալիքով պահանջել են իր հաշվեհամարից 2 հազար դոլար փոխանցել իրենց հաշվին, այնուհետեւ հափշտակել են նրա նոթբուքը, երկու բջջային հեռախոս եւ դրամապանակը, որի մեջ եղել է 150 հազար դրամ, 30 լարի, ապա նրանցից մեկը դանակով խփել է երիտասարդի ոտքին եւ թողնելով կապված վիճակում՝ դիմել են փախուստի:

Ոստիկանության ծառայողները պարզել են կասկածյալների ինքնությունը: Ձեռնարկվում են միջոցառումներ նրանց հայտնաբերելու ուղղությամբ:

Կատարվում է նախաքննություն:

# Դանակահարություն Գյումրիում

Դեկտեմբերի 7-ին «շտապօգնության» կայանից ոստիկանության Մուշի բաժնում հաղորդում էր ստացվել, որ կրծքավանդակի եւ որովայնի կտրած-ծակած վերքերով Գյումրիի Շառլ Ազնավուրի անվան հրապարակից հիվանդանոց է տեղափոխել 47-ամյա տղամարդ:

Օպերատիվ խումբը բժշկական կենտրոն էր մեկնել: Սակայն տուժողն ի վիճակի չէր եղել բացատրություն տալու:

Մարմնական վնասվածքների բնույթը հուշում էր, որ տղամարդուն դանակահարել են: Իսկ թե ով, որտեղ՝ իրավապահների հետեւողական աշխատանքի շնորհիվ պարզվեց հաղորդումից երկու օր անց:

Ոստիկանության Ախուրյանի բաժնի ծառայողների հետ համատեղ ձեռնարկած միջոցառումների արդյունքում տեղեկություններ ստացվեցին, որ դեկտեմբերի 7-ին Գյումրիի Շչերբինայի փողոցի սկզբնամասում, վիճաբանության ժամանակ, տուժողին դանակով մարմնական վնասվածք է պատճառել Կոշտոյան փողոցի 65-ամյա մի բնակիչ:

Դեկտեմբերի 9-ին կասկածվողը բերման ենթարկվեց ոստիկանության Մուշի բաժին եւ տվեց խոստովանական բացատրություն:

Քննությունը շարունակվում է:

**Գոռ ՎԱՆՅԱՆ**

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

# Մտորումներ Վանորից առաջ

Սկիզբը՝ էջ 1

Օրենքը միշտ տուժողի կողքին է, պաշտպանում է նրա շահերը, եթե տուժողն իր իրավունքների մասին իրազեկված եւ օժտված է քաղաքացիական իրավագիտակցությամբ, եթե անտարբեր չի լռում, եթե անորակ աշխատանքի կամ ապրանքի պատճառած վնասի չափը մեծ չէ: Անտարբերությունն այս դեպքում կբերի մյուս կողմի անպատասխանատվության «երկարակեցությանը», եւ հաջորդ տուժողը կարող է ավելի ծանր փորձության ենթարկվել: Ի վերջո, այդպիսիներին պատասխանատվության չենթարկելը, մեծ հաշվով, նշանակում է, որ բարձրորակ սպասարկման մասին դեռ պետք է տեւական ժամանակ երազենք:

Ներկայացվող երկու դեպքը, թերեւս, մտորելու տեղիք է տալիս ե՛ւ անպատասխանատուներին, ե՛ւ անտարբեր լռողներին:

Կոտայքի մարզի գյուղերից մեկի հինգ բնակիչ երկար կհիշեն նոյեմբերի 29-ի մղձավանջային գիշերը, երբ բժիշկների ջանքերով փրկվեց իրենց կյանքը:

«Դեպքից երեք-չորս օր առաջ գազասարքերի սպասարկում իրականացնող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններից մեկի սպասարկող փականագործ Սեդրակ Սիմոնյանը հերթական այցելության ժամանակ նորոգել էր նրանց գազի վառարանի պարպիչը: Ստուգել էր տանն առկա գազի տաքացուցիչներն ու իր նորոգած վառարանը եւ որեւէ խախտում չէր հայտնաբերել: Տանտերերը շնորհակալությամբ ճանապարհել էին նրան՝ չիմանալով, թե մատուցած ծառայությունն օրեր անց ինչ փորձություն էր բերելու:

Նոյեմբերի 29-ի գիշերը, երբ բոլորը քնած էին, երկրորդ հարկի ննջասենյակում երեխաներից մեկը սկսել էր լացել, անհանգիստ շարժումներ անել: Նրա չդադարող լացից անհանգստացած՝ տատը բարձրացել էր: Երեխան գունատված ու թույլ էր: Հետո սկսել էր վատ զգալ նաեւ թոռան համար անհանգստացած տատը, քնից արթնացել էր նաեւ մյուս երեխան: Երեքի մոտ էլ գլխապտույտ էր սկսվել:

Հասկանալով, որ ինչ-որ բան այն չէ, տանտիրուհին ձայն էր տվել որդուն եւ հարսին: Պարզվել էր՝ նրանք նույն տհաճ զգացումների մեջ էին, քիչ անց հարսը կորցրել էր գիտակցությունը:

Տանտիրուհին «շտապօգնություն» էր զանգել: Պարզվել էր՝ թունավորվել են շմոլ գազից: Իսկ հետո պարզվեց նաեւ իրողությունը. փականագործը գազի պարպիչը նորոգելիս մատուցել էր անվտանգության պահանջներին չհամապատասխանող ծառայություն, ինչի հետեւանքով չէր ապահովվել գազի արտահոսման օդափոխության անցուղին:

Հաջորդ դեպքը նույնպես անվտանգության պահանջներին չհամապատասխանող աշխատանքի հետեւանք էր: Բնական գազի թերայրման հետեւանքով առաջացած շմոլ գազից թունավորվել էին մայրաքաղաքի 65-ամյա մի բնակչուհի եւ նրա 8-ամյա թոռը:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններից մեկում փականագործ աշխատող Հարություն Մեսրոպյանն էր իրականացնում տարածքի ներտնային գազասպառման համակարգի սպասարկումը: Ժամանակ առ ժամանակ այցելում էր տներն ու ստուգում տեղադրված գազասարքերի արտահոս օդափոխության անցուղիները, օդի ներհոսի համար նախատեսված ուղիներն ու այլ անհրաժեշտ պայմանների առկայությունը:

Հերթական այցելության ժամանակ ստուգելով տուժողի տան ներտնային գազասպասարկման համակարգի տեխնիկական վիճակը՝ որեւէ խախտում չէր հայտնաբերել: Մինչդեռ անփույթ չլինելու եւ սրտացավություն, պատասխանատվություն ցուցաբերելու դեպքում կնկատեր առկա թերությունները, որոնց վերացումը պարտադիր էր:

Արձանագրելով միայն «ջրատաքացուցիչի ծխատար խողովակի կրճատումը տանիքի համեմատ» խախտումը՝ առանց խցանային փականը խցափակելու եւ կնքելու, գործն ավարտած էր համարել ու հեռացել: Որպես մասնագետ՝ պետք է որ գիտակցեր վտանգավոր հետեւանքները եւ կատարեր դրանց վերացմանն ուղղված իր պարտականությունները: Այնինչ, որպես սպասարկման պատասխանատու եւ որպես մարդ՝ չէր կատարել իր պարտականությունները, եւ գազասարքավորումների շահագործման ընթացքում տեղի էր ունեցել բնական գազի ծերայրում եւ շմոլ գազի կուտակում, ինչի հետեւանքով տանտիրուհին եւ նրան հյուրընկալած թոռը սուր թունավորումով տեղափոխվել էին հիվանդանոց: Բարեբախտաբար, բժիշկները կարողացել էին փրկել նրանց կյանքը:

*Դեկտեմբերի 11-ին հիվանդանոցից ոստիկանության Վաղարշապատի բաժին հաղորդում է ստացվել, որ «թունավորում շմոլ գազից» ախտորոշմամբ բուժօգնության են ընդունվել Փարաքար գյուղի 3 բնակիչ:*

*Մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ ժամը 23.05-ի սահմաններում տանը հեղուկ գազի թերայրից թունավորվել են:*

*Նախապատրաստվում են նյութեր:*

Բոլորիս հիշողության մեջ թարմ է Նոր Հաճընում տեղի ունեցած ողբերգությունը, երբ շմոլ գազի արտահոսքի հետեւանքով մահացան 75-ամյա տատն ու չորս անչափահաս թոռները:

Ողբերգական հաջորդ դեպքը գրանցվեց դեկտեմբերի 15-ին:

Հիվանդանոցից ոստիկանության Իջեւանի բաժին ժամը 21.30-ի ն ահազանգ ստացվեց, որ Գանձաքար գյուղի մի բնակչուհի իրենց տան լոգարանում մահացած վիճակում հայտնաբերել է որդուն եւ հարսին:

Մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ ամուսիններ՝ 1978 թ. ծնված Ռազմիկ Շահնազարյանն ու 1982 թ. ծնված Վարդուհի Ներկարարյանը մահացել են շմոլ գազից թունավորվելու հետեւանքով:

Ամփոփենք՝ պատասխանատու եւ զգույշ լինենք, որ ամանորյա տոները չխաթարվեն, որ ողբերգությունը ոչ միայն տոնական եռուզեռ օրերին, այլ ընդհանրապես շրջանցի...

**Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ**

# Բռնվեց շորթելու պահին

Դեկտեմբերի 4-ին մի կին ոստիկանության Չարենցավանի բաժնում հաղորդում էր տվել, որ սոցցանցերից մեկով ծանոթացել է Հրազդանի բնակիչ մի տղամարդու հետ, որի հետ հետագայում ինտիմ կապի մեջ են գտնվել: Հետագայում տղամարդը կնոջ մասին արատավորող տեղեկություններ չհրապարակելու, նրա երեխաների նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով, նրանից պահանջել ու ստացել է ընդհանուր 3 միլիոն դրամի ոսկյա զարդեր եւ 9 միլիոն 660 հազար դրամ: Նույն սպառնալիքով օրերս պահանջել էր նաեւ 1 միլիոն 700 հազար դրամ:

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության, Կոտայքի մարզային վարչության, Չարենցավանի բաժնի ծառայողների համատեղ իրականացրած օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում՝ Հրազդանի բնակիչը պահանջած 1 միլիոն 700 հազար դրամը ստանալու պահին բռնվեց ու բերման ենթարկվեց ԿՀԴՊ:

Հարուցվել է քրեական գործ:

# Հետախուզվողը հայտնաբերվեց

Դեկտեմբերի 6-ին ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի ծառայողները հայտնաբերել էին գողության մեղադրանքով հետախուզման մեջ գտնվող 43-ամյա տղամարդուն եւ ստուգման նպատակով տեղափոխել «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն», որտեղից դեկտեմբերի 7-ին նա դիմել էր փախուստի:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական ծավալուն միջոցառումների արդյունքում ոստիկանության Կումայրիի բաժնի ծառայողները տեղեկություններ ստացան, որ փախուստի դիմած անձը թաքնվում է Գյումրու հյուրանոցներից մեկում: Տեղեկությունների իրացման արդյունքում նա հայտնաբերվեց, կալանավորվեց ու տեղափոխվեց քրեակատարողական հիմնարկ:

# Գողություն՝ պատրվակով

Ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախույզները, իրացնելով բնակարանային գողության վերաբերյալ ստացած օպերատիվ տվյալները, դեկտեմբերի 8-ին մայրաքաղաքի Սեբաստիայի փողոցից բերման ենթարկեցին 29-ամյա երիտասարդի, որը Երեւանի բնակիչ է:

Շենգավիթի ոստիկանները հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ էին ձեռք բերել, որ բերման ենթարկվածը դեկտեմբերի 7-ին թոշակ հատկացնելու պատրվակով մտել էր Եղբայրության փողոցի տներից մեկն ու, օգտվելով տանտիրոջ անուշադրությունից, գողացել պահարանում դրված 70 հազար դրամը:

Կատարվում է քննություն:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

# Կեղծ վարորդական վկայականներ

Այս տարվա մայիսին ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ ճանապարհային ոստիկանության հաշվառման եւ քննական ստորաբաժանումների ծառայողները, առանց որեւէ ստուգման, ՌԴ նմուշի կեղծ վարորդական վկայականների հիման վրա տրամադրում են հայկական նմուշի վարորդական վկայականներ:

Նշվածի վերաբերյալ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվել են ուսումնասիրություններ, որոնց շրջանակներում ճանապարհային ոստիկանությունից ստացվել են 2019 թվականի հունվարի 1-ից մայիսի 23-ն ընկած ժամանակահատվածում ոչ ազգային վարորդական վկայականների հիմքերը: Դրանց ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված ժամանակահատվածում ՌԴ նմուշի 84 վարորդական վկայականների հիման վրա տրամադրվել են հայկական նմուշի վարորդական վկայականներ:

Ձեռնարկված միջոցառումներով պարզվել է, որ 84 վարորդական վկայականներից 3-ը ՌԴ ոստիկանության կողմից չեն տրամադրվել, եւ ներկայացված կեղծ վարորդական վկայականների հիման վրա քաղաքացիներին հատկացվել են հայկական նմուշի վարորդական վկայականներ:

Ուսումնասիրության նյութերն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն՝ 3 քաղաքացու կողմից հնարավոր կեղծ վարորդական վկայականներ ձեռք բերելու եւ օգտագործելու, ինչպես եւ դրանք հայկական նմուշի վարորդական վկայականներով փոխարինելու հանգամանքներին քրեաիրավական գնահատական տալու համար:

Նշված դեպքերի առթիվ դեկտեմբերի 10-ին ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել են քրեական գործեր:

Կատարվում է նախաքննություն:

**Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ**

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

# Զենք-զինամթերքի կամավոր հանձնում

Ոստիկանության ծառայողների բացատրական աշխատանքի արդյունքում օրերս տարածքային մի քանի ստորաբաժանումում արձանագրվել են ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնման դեպքեր:

Դեկտեմբերի 9-ին ոստիկանության Դիլիջանի բաժին եկած 35-ամյա տղամարդը, որը Հաղարծինի բնակիչ է, կամավոր հանձնեց գործարանային համարով երկփողանի հրացան՝ հայտնելով, որ հրազենը պատկանել է հանգուցյալ պապին:

Ոստիկանության Չարենցավանի բաժնում ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնման

դեպք արձանագրվեց դեկտեմբերի 9-ին: Արզականի 27-ամյա բնակիչը բաժին բերեց գործարանային համարով մեկփողանի հրացան եւ ինքնաձիգի փամփուշտներ:

Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Անիի բաժին եկած 64-ամյա կինն էլ կամավոր հանձնեց 9 մմ տրամաչափի փամփուշտի համար նախատեսված ինքնաշեն ատրճանակ, ինքնաձիգի փամփշտատուփեր եւ փամփուշտներ: Նրա հայտնածով՝ դրանք պատկանել են հանգուցյալ ամուսնուն:

Նշանակվել են դատաձգաբանական փորձաքննություններ:

Հիշեցնենք, որ ապօրինի պահվող զենք-զինամթերքը կամավոր հանձնողներն ազատվում են քրեական պատասխանատվությունից:

# Ապամոնտաժել էր խողովակներ

Ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի ծառայողները, օպերատիվ տվյալներն իրացնելիս, դեկտեմբերի 7-ին Տավուշի մարզի մի բնակչի տան բակում կատարած զննությամբ հայտնաբերել են 8 հատ՝ յուրաքանչյուրը 5 մ երկարությամբ, ամբողջականությունը պահպանված ցինկապատ խողովակներ եւ 5 հատ հորիզոնական կտրված՝ յուրաքանչյուրը 5 մ երկարությամբ ցինկապատ խողովակներ, որոնցով պատրաստել էր խոտի հակերի համար ծածկոց: 77-ամյա տանտերը հայտնել է, որ խողովակներն առանց թույլտվության ապամոնտաժել է մոտ տասնհինգ տարի առաջ Կոթի գյուղի «Թեղուտ Ղոբին» կոչվող վայրում, իրեն պատկանող հողամասով անցնող, չգործող ոռոգման ջրագծից եւ տեղափոխել է իր տան բակ:

Նախապատրաստվում են նյութեր:

# Գրպանահատը բերման ենթարկվեց

Դեկտեմբերի 9-ին ոստիկանության Նոր Նորքի բաժնում հաղորդում ստացվեց, որ գողացել են մի կնոջ դրամապանակը, որի մեջ փող կար: Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի գրպանահատության դեմ պայքարի բաժանմունքի ծառայողները, իրացնելով ստացված օպերատիվ տվյալները, պարզեցին գրպանահատությունը կատարած անձի ինքնությունը: Դեկտեմբերի 10-ին Կապանի բնակիչ, 21-ամյա երիտասարդը հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանության Նոր Նորքի բաժին ու տվեց խոստովանական բացատրություն: Դեպքի առթիվ նյութեր են նախապատրաստվում:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

# Աչքերի մոգությունը

### Մահապատիժ՝ կապված աչքերով

Մարդկության պատմության մեջ արձանագրվել են բազում դեպքեր, երբ մարդու հայացքը հանելուկային ազդեցություն է ունեցել շրջապատի վրա: Տարիներ առաջ ահա թե ինչ հաղորդագրություն հրապարակեց «Քանադիեն թրիբյուն» թերթը: Որսի ժամանակ 55-ամյա կանադացի Սթիվ Մաք Քելանի վրա է հարձակվում գազազած արջը: Գետնին պառկած Սթիվը բնազդաբար առաջ է պարզում դանակ բռնած ձեռքը եւ հուսահատությամբ ու կատաղությամբ լի հայացքը սեւեռում արջի աչքերին: Որսորդը հասկանում էր, որ դրանով ավելի է կատաղեցնում գազանին, սակայն կատարվեց անասպասելին. արջը նախ քարացավ տեղում, ապա սարսափելի ոռնոց արձակեց եւ անշնչացած փռվեց: Նրա մարմնի վրա ոչ մի վնասվածք չհայտնաբերվեց: Գիտնականները եզրակացրին, որ կենդանու մահվան պատճառը հզոր կենսաէներգետիկ հոսքն է եղել, որ արձակվել է մարդու աչքերից:

Այս եզրակացության մեջ ոչ մի արտակարգ կամ գերբնական բան չկա: Վաղուց ի վեր հայտնի են ժողովրդական ավանդույթներ. օրինակ, մահամերձ մարդու հայացքը ահռելի էներգիա է կրում եւ կարող է անուղղելի վնաս հասցնել նրա աչքերի մեջ նայողին: Ի դեպ, դրանով է բացատրվում նաեւ մահապատժի ժամանակ մահապարտի աչքերը կապելու սովորույթը:

### Լազերային «չար աչքը»

Ահա թե ինչ է պատմել Բիշքեկի տարրական դասարաններից մեկի ուսուցչուհին: Նկարչության դասին տղաներից մեկը խլում է դասընկերուհու ներկը: Աղջնակը ոչ լալիս է, ոչ էլ դիմում ուսուցչուհուն, պարզապես սեւեռուն նայում է իրեն նեղացնողին: Մի քանի վայրկյանից տղան սկսում է ճչալ, ու մոտ վազած ուսուցչուհին նկատում է, որ նրա ձեռքը փքվել է՝ ասես այրվածքից: «Ո՞վ արեց» հարցին ի պատասխան՝ ցավից ճչացող տղան ցույց է տալիս դասընկերուհուն: «Ինչո՞վ վառեց»՝ հարցնում է ուսուցչուհին: «Աչքերով»՝ հստակ պատասխանում է վնասվածք ստացածը: Երբ ուսուցչուհու խնդրանքով վեցամյա աղջնակը իր հայացքը սեւեռում է նրա ձեռքին, կինը դաստակի շրջանում սուր ծակոց է զգում:

1925 թ. անգլիացի ֆիզիկոս Չ. Ռոսսը գիտափորձերի մի շարք դրեց, որի ընթացքում փորձարկվողներն աշխատում էին հայացքի ուժով պտտել թելից կախված փոքրիկ մետաղյա պարույրը: Նրանցից մի քանիսին հաջողվեց պարույրը պտտել «աչքերի ճառագայթների» ուղղությամբ, ինչի հիման վրա գիտնականը ենթադրեց, որ աչքերը էլեկտրամագնիսական ալիքներ են արձակում:

Իր վարկածն է առաջադրել նաեւ ռուս ռադիոֆիզիկոս Բ. Կաժինսկին, որը զբաղվում էր հեռազգացության խնդիրներով: Նրա գիտափորձերի հիմքում նշանավոր վարժեցնող Վ. Դուրովի աշխատանքն էր տարբեր կենդանիների հետ: Դուրովը կարողանում էր «քարացնել» կենդանուն՝ նայելով նրա բիբերի մեջ: Փորձերի հիման վրա Կաժինսկին եկավ եզրակացության, որ հայացքը ուղեղի կենսառադիացիոն ճառագայթման փունջ է, իսկ հաղորդչի դեր կատարում է աչքի ցանցաթաղանթը, որն ուղղակիորեն կապված է ուղեղի հետ:

Վերջին շրջանի հետազոտությունները ցույց են տվել, որ ժողովրդական հավատալիքներից շատերը՝ կապված «չար աչքի» հետ, այնքան էլ անհիմն չեն: Մասնավորապես, ակադեմիկոս Վ. Կազնաչեեւի աշխատանքները Սիբիրի ախտաբանության եւ մարդու էկոլոգիայի ինստիտուտում հաստատել են, որ լազերային ճառագայթը կարող է որոշակի տարածության վրա ինֆորմացիա տեղափոխել եւ, օրինակ, մանրէներով վարակել լիովին մեկուսացված միջավայրը, ասենք, ջուրը՝ զոդված անոթում: Եթե ընդունենք, որ «աչքի ճառագայթը» լազերային ճառագայթի հատկություններ ունի, ապա բացառված չէ, որ այն նաեւ հիվանդություն բերի «օբյեկտին»: Ասել է թե՝ մեր առողջության համար շատ կարեւոր է՝ ով է մեզ նայում եւ ինչ նպատակով:

*Շարունակելի*

**Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ**

# Ավարձալի ամփոփագիր

### Կարտոֆիլի փողը

53-ամյա մի տղամարդ ոստիկանության բաժին դիմում է ներկայացրել, որ 2018 թվականի հոկտեմբերի վերջին ութ օրերին ինքը, կինը եւ որդին օրավարձով աշխատել են 56-ամյա մի տղամարդու կարտոֆիլի դաշտերում, որի դիմաց նա պետք է վճարվեր 219 հազար դրամ, սակայն մինչ օրս չի վճարել:

Նյութերի նախապատրաստման ընթացքում դաշտի տերը հայտնել է, որ ամբողջությամբ վճարել է, իրեն զրպարտում են:

Հանգամանքները պարզվում են:

### Թթու ջրի մոտի գարեջուրը

Գիշերվա մեկին հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ որովայնի եւ կրծքավանդակի վերքերով ու ծնկի քերծվածքներով բուժօգնության է դիմել 31-ամյա մի տղամարդ: Նա հայտնել է, որ վնասվածքները ստացել է նախորդ երեկոյան, երբ «Թթու ջուր» աղբյուրի մոտ գարեջրի շիշն ընկել է ձեռքից:

Հանգամանքները պարզվում են:

### Ռուբլու կարոտախտ

84-ամյա մի տղամարդ հաղորդում է տվել, որ անհայտ անձը այցելել է իր բնակարան եւ ներկայանալով սոցիալական ապահովության ծառայության աշխատակից՝ հայտնել է, թե պետությունը միայնակ թոշակառուներին Ամանորի նախատոնական օգնություն է տրամադրում, ապա իրեն է հանձնել ռուսական երեք հինգհազարանոց հուշանվեր ռուբլի: Հետո կեղծ աշխատակիցը բացատրել է, թե գումարի չափը նախատեսվածից շատ է, եւ պահանջել ու ստացել է 20 հազար դրամ: Սակայն սա էլ քիչ համարելով՝ օգտվելով ռուբլու կարոտախտով տառապող ծերունու անուշադրությունից, ննջասենյակի պահարանից գողացել է 85 հազար դրամ եւ հեռացել:

Ձեռնարկվում են միջոցառումներ անհայտ անձին հայտնաբերելու ուղղությամբ:

### Ձանգն էլ բավական էր

Ոստիկանություն զանգած քաղաքացուհին հայտնում էր, որ իր բնակարանն ուզում են այրել:

Մեկնած ոստիկաններին 31-ամյա կինը հաղորդում է տվել, որ իր ամուսնու նախկին կինը այցելել է իրենց շենք, թակել տան դուռը, պահանջել բացել՝ սպառնալով, թե կվառի տունը եւ բենզին է լցրել դռան վրա: Սակայն լսելով, որ ինքը զանգում է ոստիկանություն, հեռացել է:

### Ջուտ կնոջ զենք

57-ամյա մի կին հաղորդում է տվել, որ շենքի մոտ, վիճաբանության ժամանակ, 23-ամյա հարեւանուհին մետաղյա սրճեփով խփել է իր դեմքին եւ պատճառել մարմնական վնասվածք:

### Վթար՝ առանց հափշտակության

Հաղորդվել էր Իջեւանի մի փողոցում էլեկտրասյունը վնասելու եւ լուսավորման լամպը գողանալու մասին:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ բաժին է հրավիրվել 38-ամյա մի երեւանցի: Նա խոստովանական բացատրություն է տվել, որ իր «Օպել Աստրա» մակնիշի մեքենայով բախվել է էլեկտրասյանը, որի վրայի լամպն ընկել եւ կոտրվել է: Ինքն էլ վերցրել եւ այն գցել է աղբարկղը:

# www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ դեկտեմբերի 12 -ից 19-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 36 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր ծեծի եւ գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու, 1-ը՝ ազատությունից ապօրինի զրկելուն հանցակցելու եւ շորթմանը հանցակցելու, 1-ը՝ տասնվեց տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերություն կամ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու, 3-ը՝ գողության, 1-ը՝ գողության եւ գողության փորձի, 2-ը՝ գողության փորձի, 1-ը՝ գողության փորձին հանցակցելու, 1-ը՝ գողության եւ գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու, 1-ը՝ խարդախության, 1-ը՝ ահաբեկչության մասին սուտ հաղորդում տալու,1-ը՝ դիակը կամ թաղման վայրերն անարգանքի ենթարկելու, 1-ը՝ հանցագործության մասին չհայտնելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 1 հետախուզվող:

Արձանագրվել է 119 ճանապարհատրանսպորտային պատահար. 10 մարդ զոհվել է, 159-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 34 դեպք. 1 մարդ զոհվել է, 35-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

## Հանրապետության ճանապարհներին

Դեկտեմբերի 16-ին Սարդարապատ-Նոր Արմավիր ճանապարհի 4-րդ կմ-ին իրար են բախվել «ՎԱԶ-2107» եւ «ՎԱԶ-21074» մակնիշի մեքենաներ. «ՎԱԶ-2107»-ի 73-ամյա վարորդը տեղում մահացել է, իսկ «ՎԱԶ-21074»-ի 43-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 16-ին «Մերսեդես» մակնիշի մեքենայի վարորդը Երեւանի Արագածի եւ Մայիսի 9-ի փողոցների խաչմերուկում վրաերթի է ենթարկել 61-ամյա կնոջ, որը մարմնական վնասվածքներով բուժօգնության է տեղափոխվել հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 17-ին «Օպել» մակնիշի մեքենայի վարորդը Երեւանի Ն. Զարյան փողոցում վրաերթի է ենթարկել 54 եւ 57 տարեկան երկու կանանց, որոնք մարմնական վնասվածքներով բուժօգնության են տեղափոխվել հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 17-ին Երեւանի Բաբաջանյան եւ Աշխաբադի փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Օպել», «Տոյոտա» եւ «Պորշ» մակնիշի մեքենաներ. «Օպել»-ի վարորդը եւ «Տոյոտա»-ի ուղեւորը մարմնական վնասվածքներով բուժօգնության են տեղափոխվել հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 17-ին Ալագյազ-Արթիկ ճանապարհի Ծաղկահովիտ գյուղի խաչմերուկում իրար են բախվել «Շեվրոլե», Նիվա» եւ «ՎԱԶ-2106» մակնիշի մեքենաներ. վարորդները եւ «ՎԱԶ-2106»-ի երեք ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 17-ին «Օպել Աստրա» մակնիշի մեքենան Մեծամոր-Արմավիր ճանապարհին՝ Արմավիր քաղաքի սկզբնամասում, կողաշրջվել է, դուրս եկել հանդիպակաց գոտի եւ բախվել «ԳԱԶել» մակնիշի մեքենայի. «Օպել Աստրա»-ի վարորդը տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ, գիտակցության չգալով, մահացել է:

■

Դեկտեմբերի 17-ին Վանաձորի Թումանյանի անվան հրապարակում իրար են «ՎԱԶ-2106» եւ «ՎԱԶ-2101» մակնիշի մեքենաներ. վարորդներից մեկը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 17-ին «Նիսան Իքս Տրաիլ» մակնիշի մեքենան Վանաձոր-Դիլիջան ճանապարհի 33-րդ կմ-ին դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ ընկել ձորը. 47-ամյա վարորդը եւ 45-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց, իսկ 72-ամյա ուղեւորուհին տեղում մահացել է:

■

Դեկտեմբերի 17-ին Սպիտակ-Գյումրի ճանապարհի 22-րդ կմ-ին իրար են բախվել «ԲՄՎ» եւ «Օպել Աստրա» մակնիշի մեքենաներ. «ԲՄՎ»-ի ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 17-ին «Մերսեդես» մակնիշի մեքենան Գողթ գյուղի Գեղարդի խճուղում բախվել է ճանապարհին կայանված երկու «ՎԱԶ-2107» եւ խոտանված վիճակում գտնվող «ԼԱԴԱ-21012» մակնիշի մեքենաների, ապա վրաերթի ենթարկել երեք տղամարդկանց. վրաերթի ենթարկվածները եւ «ՎԱԶ-2107»-ի սրահում գտնվող երկու քաղաքացիներ մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 17-ին «ՎԱԶ-21102» մակնիշի մեքենայի վարորդը Չարենցավան քաղաքի 8-րդ թաղամասում վրաերթի է ենթարկել 38-ամյա կնոջ, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 17-ին «Մերսեդես» մակնիշի մեքենան Գյումրիի Շիրակացու փողոցում բախվել է մայթեզրին կայանված «Օպել» եւ «ԳԱԶ-24» մակնիշի մեքենաների, վերջինս էլ բախվել է մայթեզրին կայանված «Նիսան» մակնիշի մեքենայի. «ԳԱԶ-24»-ի վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 18-ին «Ֆոլքսվագեն Վենտո» մակնիշի մեքենան Գյումրի-Վանաձոր ճանապարհի 13-րդ կմ-ին դուրս է եկել երթեւեկելի մասից եւ կողաշրջվել. վարորդը եւ երեք ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

## Ասատրյանը ռեժիսորը

Վալերի Ասատրյանը ծնվել է 1958 թվականին, Երեւանում, սովետական չափանիշներով՝ բավական բարեկեցիկ ընտանիքում: Ի տարբերություն այլ սերիական մարդասպանների՝ մանուկ հասակում նա ընտանիքի կամ շրջապատի կողմից բռնության չի ենթարկվել, դաժան մանկություն չի ունեցել: Ասատրյանը մեծանում էր որպես տկար եւ հիվանդոտ երեխա: Դեռ մանկուց Ասատրյանի մոտ ի հայտ եկավ պաթոլոգիա. մանկապարտեզում աղջիկների հետ սիրում էր «բժիշկ-բժիշկ» խաղալ: Խաղի նպատակն այն էր, որ իր «հիվանդներին» մերկացնում էր: Երիտասարդ տարիքում ապրում էր ակտիվ սեռական կյանքով:

Դպրոցական տարիներին Վալերի Ասատրյանը տարվեց հոգեբանությամբ: Ավարտելով դպրոցը՝ 1975 թվականին ընդունվեց Հայկական մանկավարժական ինստիտուտ եւ ձեռք բերեց «նախադպրոցական հոգեբանություն եւ մանկավարժություն» մասնագիտություն:

Այդ ընթացքում ապագա մոլագարի մոտ արդեն աղոտ ձեւավորվել էր զոհերի պատկերը: Նրանք պետք է լինեին մոտ 10-14 տարեկան աղջիկներ: Իսկ երբ կարդաց Վլադիմիր Նաբոկովի «Լոլիտա» վեպը, սկսեց զուգահեռներ անցկացնել իր եւ գրքի հերոս Հումբերտի հետ, իսկ Լոլիտայի կերպարը դարձավ նրա իդեալը:

1980 թվականին Ասատրյանը ավարտելով ինստիտուտը՝ հոգեբան աշխատեց երեխաների հատուկ ինտերնատում: 1981 թվականին ամուսնացավ մոսկվայաբնակ մի կնոջ հետ եւ տեղափոխվեց Ռուսաստան: Նույն տարում կատարեց առաջին հանցարարքը՝ բռնաբարեց անչափահաս մի աղջկա: Շուտով հանցանքը բացահայտվեց. 1982 թվականին նրան դատապարտեցին եւ ուղարկեցին գաղութ: 1984 թվականին հայտնվեց ազատության մեջ՝ ոչ երկար ժամանակով: 1985 թվականին նորից կատարեց նմանատիպ հանցանք եւ նորից դատապարտվեց: 1987 թվականին պատիժը կրելուց հետո Ասատրյանը Մոսկվայից տեղափոխվեց Բելգորոդի շրջանի Վալույկի քաղաք, իսկ 1988 թվականին վերադարձավ մայրաքաղաք: Կինը նրան չընդունեց: Շուտով հանդիպեց մի կնոջ, որի հետ քաղաքացիական ամուսնություն գրանցեց: Կնոջ տասնչորսամյա դուստրը նրա հերթական զոհն էր: Ասատրյանը ստիպեց երկուսին աջակցել իրեն հանցագործություն կատարելիս:

Ասատրյանը հանցագործություններ կատարելիս օգտագործում էր ուժեղ ազդեցությամբ հոգեմետ դեղեր՝ նեյրոլեպտիկներ եւ տրանկվիլիզատորներ: Իր համար պատրաստել էր կինոռեժիսորի կեղծ վկայական՝ Սվյատոսլավ Չապլիգին անուն-ազգանունով: Կեղծ փաստաթղթի շնորհիվ վստահություն էր ձեռք բերում: Իր բոլոր զոհերին նա գտնում էր «Մանկական աշխարհ» խանութում:

1988 թվականի փետրվարին նա, կինոտիրոջի պատրվակով, խաբեությամբ բնակարան բերեց մի աղջկա: Սուրճի հետ դեղ խառնեց՝ սպասեց այնքան, որ նա անգիտակից վիճակում հայտնվի եւ մի քանի ժամ շարունակ բռնաբարեց, ապա վերցնելով զոհի իրերը եւ փողը՝ անգիտակից վիճակում տեղափոխեց Պոդոլսկի շրջանի երկաթգծի տարածք: Աղջկան գտան, բայց նա այդպես էլ չկարողացավ հիշել, թե ինչ էր տեղի ունեցել:

Վաճառելով իրերը՝ նա հաջորդ զոհի համար ծաղիկներ եւ շամպայն գնեց: Նա կատարել է տասնյակից ավելի նմանատիպ հանցագործություն: Զոհերից շատերը մոլագարի բնակարանում անցկացրել են նույնիսկ մի քանի օր:

Որոշ ժամանակ անց Ասատրյանը սկսեց լրջորեն անհանգստանալ, թե կարող է բացահայտվել: Հանցագործության հետքերը թաքցնելու նպատակով սկսեց սպանել զոհերին. մեկը մահացավ քոքթեյլի գերդոզավորումից, երկրորդին սպանեց դանակով, երրորդին՝ ջրահեղձ արեց: Ասատրյանն ամեն անգամ փոխում էր հանցագործության «ձեռագիրը», որպեսզի դրանք չորակվեին սերիական հանցագործություններ: Ասատրյանի զոհերից մեկը, որին ողջ էր թողել, լիովին չէր կորցրել հիշողությունը եւ իրավապահներին հայտնեց ռեժիսորի մասին, որն առաջարկել էր նկարահանվել կինոյում: Աղջիկն անգամ հիշում էր, թե որտեղ է հանդիպել նրան: Ասատրյանը ձերբակալվեց նմանատիպ առաջարկի ժամանակ, երբ միլիցիայի աղջիկ-գործակալին գայթակղում էր նկարահանվելու կինոյում:

Ասատրյանը վախենում էր կրկին բանտում հայտնվելուց. լավ գիտեր, թե իրեն ինչ է սպասում այնտեղ: Նա խոստովանեց իր կատարած երեք սպանություններն ու մոտ երկու տասնյակ բռնաբարություններ: Զոհերի մեծ մասն անչափահասներ էին: Ամենայն մանրամասնությամբ դատարանին պատմեց, թե ինչպես է սպանել ու բռնաբարել: Նա տենչում էր մահապատիժ: Նախընտրում էր մեռնել, քան հայտնվել բանտում: Դատարանը բավարարեց նրա խնդրանքը: Վալերի Ասատրյանը հրաժարվեց բողոքարկել, եւ դատավճիռն ի կատար ածվեց:

## Մարդկության ամենահայտնի դավաճանները

***Դավաճանությունը, թերեւս, մարդկային ամենաեղկելի մեղքերից է, որը մերժվել է բոլոր ժամանակներում, բոլոր ազգերի կողմից: Դավաճաններին չեն ընդունում նույնիսկ նրանք, ում օգտին կատարվել է դավաճանությունը: Իհարկե, իրավիճակներ են լինում, երբ դժվար է հստակ որոշել մարդու մեղավորությունը, դավաճանության «արդարացի» կամ «անարդար» լինելը: Մենք՝ հայերս ունենք նման օրինակ: Մեր պատմության մեջ ասվածի ամենավառ ապացույցներից է Վասակ Մամիկոնյանի արարքը, որը տարբեր պատմաբաններ տարբեր կերպ են ընդունում:***

***Ինտերնետային կայքերից մեկը վերջերս փորձել է «համակարգել» բոլոր ժամանակների եւ ժողովուրդների ամենահայտնի դավաճանների «թեժ հնգյակը»:***

### Երբ դավաճան է երկրի ղեկավարը

Վերջից հինգերորդ հորիզոնականում է Չինաստանում հռչակված դավաճան Վան Չինգվեյը: Ծնվել է 1883 թվականին: 21 տարեկանում ընդունվել է ճապոնական համալսարան, որտեղ էլ ծանոթացել է չին հայտնի հեղափոխական Սուն Յաթ Սենի հետ: Նրա ազդեցության տակ ընկնելով՝ փոխեց աշխարհընկալումը եւ կարճ ժամանակում դարձավ հեղափոխական: Երկուսով մասնակցեցին հակաիշխանական ցույցերի: Եվ մի օր էլ հայտնվեց բանտում: Բանտում անցկացրեց մի քանի տարի, բայց կապն ընկերոջ հետ չկտրեց: Ավելին՝ բանտից համագործակցում էր նրա հետ: 1920 թվականին Սենը եւ նրա շրջապատը եկան իշխանության: Հինգ տարի անց Սենը մահացավ, եւ Չինգվեյը փոխարինեց նրան՝ դառնալով Չինաստանի ղեկավար: Սակայն երբ ճապոնացիները պատերազմ սկսեցին Չինաստանի դեմ, Չինգվեյը, լինելով երկրի ղեկավար, ոչինչ չձեռնարկեց երկիրը փրկելու համար: Նա սկսեց համագործակցել թշնամիների հետ եւ հեռացավ երկրից:

### Եվ դո՛ւ, Բրուտո՛ս...

Մյուս դավաճանին, կարելի է ասել՝ բոլորը գիտեն: Բրուտոսն է: Հայտնի արտահայտությունը՝ «Եվ դո՛ւ, Բրուտոս», հասել է մինչեւ մեր օրերը: Ընկերոջը, զինակցին, առաջնորդին դավաճանած Բրուտոսին հասարակությունն այդպես էլ չընդունեց, եւ նրանց մտադրությունն էլ իրականություն չդարձավ: Դավաճան Բրուտոսը հետագայում ինքնասպան եղավ:

### Ամերիկյան բանակի սպան

ԱՄՆ-ի հետախուզական վարչության բարձրաստիճան սպա Օլդրիջ Էյմսը մեծ հարգանք ուներ ծառայակիցների շրջանում: Նա կարող էր բարձր պաշտոններ զբաղեցնել: Հետագայում պիտի պարզվեր, որ ռուս կինը ՊԱԿ-ի գործակալ էր: Սպայի կինը բարեկեցիկ ապրելու կողմնակից էր եւ պահանջներ էր ներկայացնում ամուսնուն: Չնայած ամուսնու աշխատավարձը բավական բարձր էր, սակայն դա չէր բավականացնում լավ ապրելուն: Կնոջ ցանկությունը կատարելու համար սպան սկսեց տեղեկություններ վաճառել ԽՍՀՄ-ին, որը նման ինֆորմացիայի համար բավական բարձր էր վճարում: Դավաճանությունը սեփական երկրին արժեցավ 4,5 միլիոն դոլար: Բայց էյմսը ձերբակալվեց եւ դատապարտվեց ցմահ ազատազրկման, իսկ հետագայում արտաքսվեց երկրից:

### Արիստոկրատ դավաճանը

Ցուցակի «արծաթակիրը» Նորվեգիայի հնագույն տոհմի ներկայացուցիչներից մեկն է՝ Վիդկուն Քվիսլինգը: Եղել է Նորվեգիայի պաշտպանության նախարար, նաեւ «Ազգային համաձայնություն» կուսակցության նախագահն էր, եւ նրան դիմում էին որպես առաջնորդի: Երբ ֆաշիստները ներխուժեցին Նորվեգիա, Վիդկունը ժողովրդին կոչ արեց դադարեցնել պայքարը եւ ենթարկվել գերմանացիներին: Բայց նորվեգացիների մեծամասնությունը չենթարկվեց եւ շարունակեց պայքարը: Նա անձամբ էր մշակել հրեաներին Նորվեգիայի համակենտրոնացման ճամբարներ ուղարկելու ծրագիրը: 1945 թվականին ձերբակալվեց եւ պետական դավաճանության մեղադրանքով գնդակահարվեց:

### Հուդայի համբույր

Բոլոր դարերի եւ ժամանակների ամենահայտնի դավաճան Հուդան է գլխավորում այս ցուցակը: Իսկ «Հուդայի համբույր» արտահայտությունը դարձել է դավաճանի պիտակ:

# Թմրանյութի ոստայնում

***Թմրամոլությունը հիմնախնդիր, հիվանդություն թե հանցագործություն դիտարկելը, թերեւս, երկրորդական է. առաջնային այն է, որ այդ ախտն իր շոշափուկներն արագ տարածում է՝ գլխավորապես վտանգելով երիտասարդությանը: Ահա այդ հարթության վրա թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարը միշտ առաջնահերթ է: Այդ նկատառումներով են ոստիկանության ամենօրյա պայքարն ու մեր շարունակական հրապարակումները:***

***Ասում են՝ թմրանյութը հիպնոսացնելու հատկություն ունի: Գուցե, բայց՝ միայն թուլակամներին, ինքնախաբեությամբ զբաղվողներին: Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի իրական արդյունքը կախված է գլխավորապես թմրամոլությամբ տառապողների կամային հատկանիշներից, որովհետեւ, ի վերջո, պահանջարկն է ծնում առաջարկ, իսկ տվյալ դեպքում՝ գումարած նաեւ թմրաբիզնեսով զբաղվողների շահադիտական նկրտումները:***

***Ուրեմն, քանի դեռ չարիքի դեմ հանրային գիտակցումն ու դիմակայությունը չկան, մարդկությանն ուղղված մարտահրավերը միշտ է լինելու:***

## «Մեղավոր» թուփը

Արարատի մարզի բնակիչ Սարգիս Պողոսյանի «մեղքն» այն է, որ օգոստոսի 28-ին, երբ գնացել էր իրենց գյուղի դաշտերը՝ տեսնելու, թե հողամասն ինչ վիճակում է, «պատահաբար» աչքով էր ընկել ճամփեզրին աճած կանեփի թուփը: Այսինքն, «մեղավորը» թուփն էր. ճամփեզրին աճած չլիներ՝ Սարգիսը հողամասի վիճակը կստուգեր՝ տուն կգնար:

Ոստիկանությունում Սարգիս Պողոսյանը հենց այդպես էլ ներկայացրեց կանեփը մարիխուանա դարձնելու եւ օգտագործելու պատմության, այսպես ասած, նախապատմությունը:

«Մեղավոր» թուփն իրականում այնքան էլ տեսանելի չէր, պարզապես փնտրողը կգտներ: Սարգիսն էլ, հակառակի պես, իր «Օպել»-ը աչքը չորս արած էր քշում եւ, քանի որ սրատես էր, նկատեց կանեփի թուփն ու անտարբեր չանցավ: Ցերեւազրկեց, հենց մեքենայում էլ չորացրեց ու հետո պատրաստի հումքը ծխելով՝ «սավառնում էր» գյուղի երկնակամարում...

Եթե ութամյա կրթությունն ու նախկին երկու դատվածությունները երեւակայությունը սահմանափակում էին, ապա թմրամիջոցն անսահման հնարավորություն էր տալիս, եւ Սարգիսը ստեպ-ստեպ հայտնվում էր երեւակայության հորիզոններում: Հենց այդպես «երեւակայելով» էլ հոկտեմբերի 15-ին հայտնվեց ոստիկանությունում ու պատմեց ճամփեզրին աճած ու պատահաբար աչքով ընկած «մեղավոր» թփի մասին հեքիաթը...

## Գերեզմանոցի ճանապարհին

Այս պատմությունը առաջինից գրեթե չի տարբերվում: Հիմնական տարբերությունը անուն-ազգանունն է: Հակոբ Սիմոնյանը նույնպես Արարատի մարզից է: Սարգսի տարիքին է՝ քառասուն տարեկան: Երկու դատվածություն ունի, երկուսն էլ, ինչպես Սարգիսը, թմրամիջոցների իրացման եւ օգտագործման համար: Հակոբը նույնպես հողագործությամբ է զբաղվում ու սեպտեմբերի 2-ին գյուղի դաշտերն էր գնացել՝ հողամասում աշխատելու նպատակով:

Ճանապարհը գերեզմանոցի մոտով էր անցնում: Հակոբն իր համար հանգիստ գնում էր, մեկ էլ աչքով ընկավ կանեփի թուփը: Գերեզմանոցի պատի տակ՝ խոտերի մեջ «թաքնված» էր, բայց Հակոբի աչքից չէր թաքնվի: Քաղեց, տուն տարավ. հո չէ՞ր թողնի «բարիքը» հենց այնպես կորչեր:

Հարեւան գյուղացի Սարգսի նման ինքն էլ ծխում էր ու «սավառնում» իրենց գյուղի երկնակամարում...

Հանդիպեցին ոստիկանության Արարատի բաժնում, եւ, իրարից անկախ, պատմեցին գրեթե նույն պատմությունը: Երկուսն էլ խոստացան, որ այլեւս ճամփեզրին կանեփի թուփ չեն փնտրի: Բույս է՝ թող աճի իր համար...

## Թմրամիջոց, բայց ոչ կանեփային

Վանաձորցի Սպարտակ Պետրոսյանի բնակարանի խուզարկությամբ հայտնաբերվածը կոդեին էր, որը պատրաստել էր անձամբ՝ տնայնագործական եղանակով: Անձնական օգտագործման համար էր, ճիշտ է՝ մեկ-մեկ էլ «հյուրասիրում էր»: Սպարտակը նախկինում նման նախասիրությունների համար ազատազրկվել էր, բայց կապը թմրանյութերի հետ չէր կտրել:

Սպարտակ Պետրոսյանը ոստիկաններին փորձում էր համոզել, որ հայտնաբերված թմրամիջոցը «ժառանգություն» էր նախկինից. ինքն այն ժամանակ օգտագործում էր, ինչի համար քրեական պատասխանատվության արդեն ենթարկվել է: Իսկ հիմա իբր թմրամիջոց չի օգտագործում: Այնինչ, նրա բնակարանի կահավորանքը լրացնող տարաները, հեղուկով ու փոշենման զանգվածով լցված ներարկիչներն ու սրվակները, դեղահաբերն ու կոդային հատվածները քերած լուցկու տուփերն այլ բան էին փաստում: Իսկ հարցին՝ ինչո՞ւ էր այդ իրերը պահում, եթե թմրամիջոցին հրաժեշտ էր տվել, պատասխան չուներ:

Պատասխանը տվեց տոքսիկաքիմիական փորձաքննությունը: Մեկ այլ՝ դատաբնակոլոգիական փորձաքննության եզրակացությամբ էլ՝ Սպարտակ Պետրոսյանը հարկադիր բուժման կարիք ունի:

## Կալանավայրից՝ կալանավայր

Արգավանդցի Գրիգոր Գրիգորյանը տասը տարի ժամկետով ազատազրկման դատապարտվեց 2010 թվականի մարտին: Դատապարտվեց սպանության փորձի, ապօրինի զենք պահելու եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար:

Պատժի կրումը նաեւ ուղղվելու հնարավորությո՞ւն է, թե՞ ուղղվել-չուղղվելը մարդու տեսակի խնդիր է: Թերեւս՝ երկրորդը, այլապես կրկնահանցագործներ չէին լինի:

Երեսունհինգամյա Գրիգոր Գրիգորյանը տրամադրված չէ փոխվելու: Այլապես համաներմամբ պատժաչափը երեք տարով կրճատելուց հետո, ուղիղ մեկ տարի անց, կրկին երկարացնելու ուղին չէր բռնի՝ իր «ջրերը գցելով» նաեւ համագյուղացուն՝ Արսեն Մկոյանին. նա պատիժ է կրելու Գրիգոր Գրիգորյանին օժանդակելու համար:

Գրիգոր Գրիգորյանի կյանքի կարեւոր իմաստներից մեկը թմրամիջոցների հետ է կապված: Ուստի պատիժ կրելու անհարմարությունն էլ հատկապես թմրամիջոցի «հաճույքից» օգտվել չկարողանալն է:

Բայց Գրիգորը արտաքին աշխարհի հետ կապն ապահովող բջջային հեռախոս ուներ, նաեւ՝ թմրամիջոցների «ոլորտում» նախկին կապը կար: Զանգեց ու պայմանավորվեց, հետո «ցուցում» տվեց Արսեն Մկոյանին՝ որտեղ եւ ումից ստանալ թմրամիջոցը:

Ամեն ինչ եղավ հստակ: Արսեն Մկոյանը պայմանավորված վայրում ստացավ թմրամիջոցն ու հաջորդ օրը ճանապարհվեց կալանավայր՝ Գրիգորի հետ տեսակցության: Իսկ գուլպաների մեջ «բալասանն» էր:

Զննության սենյակում, սակայն, պահուստը հայտնաբերվեց, եւ հանուն ընկերոջ «խիզախած» Արսեն Մկոյանը դարձավ հանցակից: Նրան առաջադրված մեղադրանքը քրեական օրենսգրքի 38-268 հոդվածի հատկանիշներով է, իսկ Գրիգոր Գրիգորյանը մի քիչ էլ երկարածգեց անազատության ժամանակը...

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

# Բացահայտվել են համայնքապետի ապօրինությունները

Ոստիկանության Աշտարակի բաժնում ստացված օպերատիվ տեղեկությունների հիման վրա նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ Արագածոտնի մարզի Կոշ համայնքի ղեկավարը 2015-2019 թթ. ընթացքում ապօրինություններ է թույլ տվել:

Ըստ քննությանն այս պահին հայտնի տվյալների՝ համայնքի ղեկավարը ապամոնտաժել է 30 սմ տրամագծով մոտ 2000 մետր երկարությամբ խողովակաշարը, որն անցել է սեփականության իրավունքով մեկ ուրիշի պատկանող հողամասի մոտով եւ հասել մինչեւ Արզնի-Շամիրամ ջրանցք: Նյութերի նախապատրաստման ընթացքում՝ իրականացվել է դեպքի վայրի զննություն, մի շարք անձանցից բացատրություններ են վերցվել ու հարցումներ արվել: Պարզվել է, որ խողովակները համայնքի սեփականությունն են:

Ոստիկանության Աշտարակի բաժնում քրեական գործ է հարուցվել, որն ուղարկվել է Արագածո տնի մարզային քննչական վարչություն:

# Թմրամոլի իրացում

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի ծառայողները, իրացնելով օպերատիվ տվյալները, Կոմիտասի պողոտայում հայտնաբերել եւ կասկածանքով բերման են ենթարկել երկու տղամարդու: Արմավիր քաղաքի բնակիչ, 40-ամյա տղամարդու անձնական խուզարկությամբ հայտնաբերեցին հերոինի նմանվող զանգվածներ, իսկ Արմավիրի մարզի Նորավան գյուղի բնակիչ, 41-ամյա տղամարդու անձնական խուզարկությամբ՝ մարիխուանայի նմանվող զանգված:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումներով փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ հերոինի նմանվող զանգվածը բերման ենթարկվածը ձեռք է բերել Երեւանի 56-ամյա մի բնակչից: Նա եւս հայտնաբերվեց եւ բերման ենթարկվեց:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումները շարունակվում են:

# Միջադեպ հրազենի գործադրմամբ

Դեկտեմբերի 11-ին հիվանդանոցից ոստիկանության Դիլիջանի բաժնում հաղորդում ստացվեց, որ հրազենային վնասվածքով իրենց մոտ է տեղափոխվել Դիլիջանի բնակիչ, 31-ամյա մի տղամարդ:

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության, Տավուշի մարզային վարչության, Դիլիջանի բաժնի եւ տարածքային նախաքննական մարմնի ծառայողները համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում փաստական տվյալներ են ձեռք բերել, որ դեկտեմբերի 11-ին Դիլիջանի Թբիլիսյան խճուղում Դիլիջանի 34 եւ 32-ամյա բնակիչների ու հիվանդանոց տեղափոխված անձի միջեւ վեճ է սկսվել, որի ընթացքում 34-ամյա տղամարդը ատրճանակով երեք անգամ կրակել է 31-ամյա տղամարդու ուղղությամբ՝ առողջությանը դիտավորությամբ պատճառելով ծանր վնասվածք:

Ձեռնարկվում են ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումներ հանցագործությունը կատարած անձանց եւ հանցագործության գործիքը հայտնաբերելու ուղղությամբ:

Կատարվում է նախաքննություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

# Ձմեռային առանձնահատկություններ

### Նախապատրաստական աշխատանքներ

Շատ մասնագետներ ցուրտ եղանակին՝ 0-ից ցածր 15 եւ ավելի աստիճանի դեպքում, կայանված մեքենայի շարժիչի եւ ընթացային որոշ դետալների մաշվածությունը համարժեք են համարում մի քանի կիլոմետր վազքին: Այլ կերպ ասած՝ ավտոմեքենան ձմռանը մոտ հինգ անգամ ավելի է «մաշվում», քան տաք եղանակին. ցրտից հիմնականում տուժում են արգելակները, մեղմիչները, կախոցի որոշ հանգույցներ, անիվները:

Մինչ խստաշունչ ցրտերի վրա հասնելը՝ ցանկալի է փոխել արգելակային կոճղակները, նույնիսկ եթե դրանք համեմատաբար լավ վիճակում են. պետք է հիշել, որ անիվների ոչ հավասարաչափ արգելակումն է հիմնականում կողասահքի պատճառ դառնում:

Ցանկալի է, որ տաք ավտոտնակների եւ ինժեկտորային շարժիչներով մեքենաների տերերը ձմռանը մշտապես մեքենայի բենզաբաքը մինչեւ վերջ լիցքավորեն, քանի որ բաքի ազատ մասում եղած օդի խոնավությունը տաք եւ սառը ջերմաստիճանի ազդեցությամբ բյուրեղանում է եւ վնասում վառելիքի պոմպն ու համակարգի մյուս հանգույցները:

Ցանկալի է նաեւ ստուգել եւ անհրաժեշտության դեպքում փոխել այրման մոմերը:

### Սեզոնային սխալներ

Չնայած ճանապարհները դեռ ձյունապատ չեն՝ ձմեռն արդեն իր «օրինական» դիրքերում է եւ ամեն պահի կարող է անակնկալ մատուցել: Իսկ այդ անակնկալները հատկապես ավտոսիրողների համար լրացուցիչ խնդիրներ են ստեղծում, որոնց լուծումը խիստ անհրաժեշտություն է, քանի որ խոսքը տվյալ դեպքում երթեւեկության անվտանգության մասին է:

Շատ նորաթուխ վարորդներ պարզապես անտեղյակ են այս եղանակի առանձնահատկություններից, իսկ ոմանք էլ ինքնավստահ անտեսում են դրանք՝ կարծելով, թե փորձանքն իրենց կշրջանցի:

Մյուսներն էլ մեքենաների ձմեռային շահագործման առանձնահատկությունների մասին ինչ-ինչ լեգենդներ են լսել, որոնք ոչ միշտ են համապատասխանում

իրականությանը:

Վարորդներից շատերի կողմից ձմռանը թույլ է տրվում չորս հիմնական սխալ:

Առաջինն ու ամենաակնհայտը ձմռանն ամառային անվադողերով երթեւեկելն է: Շատերը կարծում են, թե լավ վիճակում գտնվող ամառային դողերով կարելի է երթեւեկել նաեւ թաց ու ձյունապատ ճանապարհներին, եւ հենց այս թյուր կարծիքի հետեւանքով էլ ամեն տարի առաջին ձյան գալուն պես մի քանի անգամ աճում է ճանապարհատրանսպորտային պատահարների թիվը: Պետք չէ անտեսել կամ մոռանալ, որ ձյունապատ ճանապարհին ամառային անվադողի արգելակման ուղին առնվազն մեկուկես անգամ երկարում է:

Երկրորդ տարածված սխալը գիշերը կայանելիս ձեռքի արգելակից օգտվելն է: Նման սխալի հետեւանքով առավոտյան դժվար է լինում մեքենան տեղից պոկել. մեքենայի վրա եղած ձյունն ու սառույցը շարժման մեջ գտնվող ագրեգատների տաքությունից հալվում են, ջրի մի մասը հայտնվում է արգելակման համակարգի դետալների վրա, հալված ձյունը գիշերվա ընթացքում կրկին վերածվում է սառույցի ու խափանում արգելակների աշխատանքը:

Սխալ է նաեւ խոշորածավալ մեքենաների՝ բեռնատարների եւ ավտոբուսների հետեւից երթեւեկելը: Անհրաժեշտ է սահմանվածից ավելի միջտարածություն պահպանել, քանի որ ձյունապատ ճանապարհին, երբ մեքենան կորցնում է կառավարումը, հիմնականում ընթանում է առաջ, իսկ մեծ մեքենաների հետ բախումն առավել վտանգավոր է:

Սխալ է նաեւ ցուրտ եղանակին մեքենան լվանալը: Այս դեպքում երկու խնդիր է ծագում. ջերմաստիճանի տատանումից ներկապատ մակերեսին փոքրիկ ճաքեր են առաջանում, որոնք հետագայում կարող են կոռոզիայի համար բարենպաստ պայմաններ ստեղծել, եւ, բացի այդ, դռների փականներում հայտնված ջուրը կարճ ժամանակում վերածվում է սառույցի: Դրանից խուսափելու համար կարելի է փականները մշակել սիլիկոնային հատուկ քսանյութով, իսկ թափքը մոմապատել դրա համար նախատեսված հատուկ նյութով:

### Տաք օրերին սպասելիս

Փորձառու վարորդները արդեն աշնան վերջին օրերին ավտոմեքենան հանդերձավորում են ձմեռային դողերով, եւ այս դեպքում օրակարգում է հայտնվում ամառային դողերի «գրագետ» պահպանման խնդիրը:

Խորհուրդ չի տրվում դողերը պահել այնպիսի տեղում, ուր դրանք ուղղակիորեն կհայտնվեն արեւի ճառագայթների «թիրախում»:

Ցանկալի է դողերը պահել մութ, չոր եւ +10-25 ջերմաստիճան ունեցող պահոցներում: Կարեւոր է նաեւ ոչ թե որտեղ, այլ՝ ինչպես պահելը: Խորհուրդ չի տրվում դրանք փաթեթավորել, քանի որ դրանցում ջերմաստիճանի տատանումների հետեւանքով կարող է խոնավություն կուտակվել, ինչը ժամանակի ընթացքում բացասաբար կանդրադառնա դողերի վիճակի վրա: Առանց անվահեցերի դողերը պահում են ուղղահայաց դիրքով: Անվահեցերով դողերը պահվում են հորիզոնական, եւ ցանկալի է կիսով չափ նվազեցնել օդի ճնշումը: Եթե դողերը ավտոտնակում են պահվում, ապա անհրաժեշտ է բացառել դրանց վրա վառելիքի կամ քսայուղի առկայությունը:

# Վարորդական տարիք

**Ճանապարհատրանսպորտային պատահարների պատճառները համակողմանի եւ խոր ուսումնասիրելիս մասնագետները հաշվի են առնում նաեւ վարորդների տարիքն ու փորձառությունը, քանի որ դրանք էական նշանակություն ունեն երթեւեկության անվտանգության ընդհանուր նկարագրի վրա:**

**Թերեւս ոչ ոք չի բացառի, որ երբեմն կարելի է հանդիպել նաեւ առանց վարորդական իրավունքի վկայականի վարորդների, որոնք երթեւեկելու հնարքները ինքնուս են սերտել: Եզակի չեն նաեւ օրինական իրավունքի վկայականով, սակայն առանց համապատասխան փորձառության վարորդները կամ համապատասխան կարգ չունեցողները: Վիճակագրությունը փաստում է, որ ճանապարհատրանսպորտային պատահարների մի որոշակի մասի համար մեղավոր են հենց փորձառություն չունեցող երիտասարդ վարորդները:**

**Որպես կանոն, նոր-նոր վարորդական իրավունքի վկայական ստացածներն սկզբնական շրջանում բավական զգույշ են վարում տրանսպորտային միջոցը, անվերապահորեն հետեւում են երթեւեկության նշաններին ու գծանշումներին: Սակայն կարճ ժամանակ անց սեփական ուժերի հանդեպ թերահավատությունից**

**բխող զգուշությունն իր տեղը զիջում է ինքնավստահությանը: Փորձառության պակասն ու ինքնավստահությունն էլ նորաթուխ վարորդներին վտանգավոր են դարձնում: Բացի այդ, 18-22 տարեկան վարորդները պատահարներին մոտ երկու-երեք անգամ ավելի շատ են մասնակից լինում, քան 5 եւ ավելի տարվա փորձառություն ունեցողները: Հանրահայտ իրողություն է՝ որքան երիտասարդ է վարորդը, այնքան մեծ է վթարի ենթարկվելու հավանականությունը:**

**Ուսումնասիրությունները վկայում են, որ 18 տարեկան վարորդների կողմից վթարային իրավիճակներ ստեղծելու հավանականությունը գրեթե 100-ապատիկ է դառնում, երբ նրանց կողքին մինչեւ 22 տարեկան ուղեւոր է լինում, հատկապես՝ գեղեցիկ սեռի ներկայացուցիչ:**

**18-25 տարեկան վարորդներն ավելի հակված են երթեւեկության կանոնները խախտելուն: Արագություն զարգացնելը նույնպես տարիքային այս խմբին առավել բնորոշ վարքագիծ է: Բացի այդ, հիշատակված տարիքային խմբի վարորդները հիմնականում ավտոմեքենա վարելու մինչեւ երեք տարվա փորձ են ունենում, ինչը դժվարացնում է կրիտիկական պահերին ճիշտ կողմնորոշվել եւ անհրաժեշտ գործողություններ ձեռնարկել: Երիտասարդները ոչ սթափ վիճակում մեքենա վարելու հավանական հետեւանքներին մեծ ուշադրություն չեն դարձնում: Առհասարակ, երիտասարդ վարորդի «աքիլեսյան գարշապարը» չափից ավելի զգացմունքայնությունն ու հապճեպ որոշումներ կայացնելն է, իսկ եթե դրան հավելենք ինքնաքննադատության բացակայությունը, բավական տխուր պատկեր է ուրվագծվում:**

**Ամբողջ աշխարհում ծանր հետեւանքներով ճանապարհատրանսպորտային պատահարների 30-40%-ը բաժին է ընկնում հենց մինչեւ 25 տարեկան վարորդներին:**

**Ռիսկային խմբում են նաեւ 60-ից բարձր տարիքի վարորդները, որոնց հիմնական «թերությունը» տեսողության սահմանափակումն է: Տարիքային այս խմբի վարորդներին խորհուրդ է տրվում ձեռնպահ մնալ մեքենա վարելուց գիշերային ժամերին եւ լուսաբացին:**

# Հայտնաբերվել են հետախուզվողներ

Ոստիկանության Ստեփանավանի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքների շնորհիվ դեկտեմբերի 13-ին Մոսկվա-Երեւան չվերթով Հայաստան է ժամանել եւ կամավոր ոստիկանություն ներկայացել Ստեփանավան քաղաքի 49-ամյա մի բնակիչ, որը ոստիկանության Ստեփանավանի բաժնի կողմից հետախուզվում էր ապօրինի ծառահատման մեղադրանքով:

◆

Ոստիկանության Կոտայքի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքների շնորհիվ դեկտեմբերի 13-ին կամավոր բաժին է ներկայացել Աբովյան քաղաքի 37-ամյա մի բնակիչ, որը ոստիկանության Կոտայքի բաժնի կողմից հետախուզվում էր գողության փորձի մեղադրանքով:

◆

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության ծառայողները, ոստիկանության Շենգավիթի եւ Բազումի բաժնի ծառայողների հետ համատեղ, դեկտեմբերի 13-ին Երեւանի Վիլնյուսի փողոցից բերման են ենթարկվել նույն փողոցի 39-ամյա մի բնակչի, որը ոստիկանության Շենգավիթի բաժնի կողմից հետախուզվում էր խարդախության մեղադրանքով:

◆

Դեկտեմբերի 12-ին Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժին կամավոր ներկայացել է 52-ամյա Արմեն Ա.-ն, որը Մալաթիայի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի (Խարդախությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Տարոնի բաժնի ՔՀԲ ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ դեկտեմբերի 12-ին «Շիրակ» օդանավակայանում հայտնաբերվել եւ Վանաձոր քաղաքի Տարոնի բաժին բերման է ենթարկվել 31-ամյա Գարիկ Ս.-ն, որը ոստիկանության Սպիտակի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի (Հանցագործության մասին չհայտնելը) մեղադրանքով:

◆

Դեկտեմբերի 12-ին ոստիկանության ՔՀԳՎ օպերատիվ խմբի կողմից Մոսկվա-Երեւան չվերթով Հայաստան է տեղափոխվել 44-ամյա Արտակ Ա.-ն, որը 2018 թ. հուլիսից Նոր Նորքի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 38-182-րդ (Շորթմանը հանցակցելը) եւ 38-133-րդ (Ազատությունից ապօրինի զրկելուն հանցակցելը) հոդվածների մեղադրանքով:

◆

Ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախույզների եւ վետերանների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ դեկտեմբերի 12-ին Մանթաշյան փողոցի շենքերից մեկի մի բնակարանից բերման է ենթարկվել 26-ամյա Զորիկ Պ.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի (Զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ լքելը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության ծառայողների անցկացրած բացատրական աշխատանքների շնորհիվ դեկտեմբերի 11-ին ՔՀԳՎ է ներկայացել 28-ամյա Նարեկ Գ.-ն, որը ՌԴ Ռոստովի մարզի իրավապահների կողմից հետախուզվում էր ՌԴ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի (Սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը) մեղադրանքով:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

«Նավապետ Բլադի ...ը»
Սարգիս ... Երաժշտ. երկ
Պատմ. մարզ Ֆրանսիա ճապոնացի գրող
Տիբեթի ցուլ Բազազ Արտեմի կինը
Ֆրանս. փիլիսոփա Կուլա
Գեղեցիկ եղջերու Տողաշար մեքենա
Մասիս
Զորակոչից փախչող Լորենիների պուրակ
Իսակով, Ուշակով Ռուս նկարիչ
Անձն. դերանուն ... Գոդունով
Զեւսի արվեստասեր որդին
... սեղան Վճիտ
Նապաստակ Դեղանյութ
Բերդի, քաղաքի զորք ... Սմիսլով
Ալլա ...
Օլեգ ... Հիրոսիմա եւ ...
Նստվածքային ապար Խանդաղատանք
Նախնադար. արգելք Իմանուիլ
Լատիշ գրող Բաղդադ
Նիզակ %
Լիտվ. քաղաք Կիեւյան իշխան
Վառելեյ Քաղաք, Լվովի մարզ
Դանիացի ֆիզիկոս Մոմակերպ նյութ
Բուժաշխատող Նոտա
Գանգրամազ շուն
Ամերիկ. լեզվաբան Աքրա
16 հրաբխ. կղզիներ, էկվադոր
Լուսնի աստվածուհի (հուն)
Ջորջ ... Բայրոն
Քիմ. տարր, ծանր մետաղ
Մանկանը քնեցնելու երգ
Խոշոր պտուղ
Նահապետ ... Կովեր
Կիմ Իր ... Ձուկ
Քերծե Հունական տառ
Վերահսկչական թերթիկ
Նավահանգիստ, Ալժիր
Իտալացի քանդակագործ
Քաղց Նանդու
Նկարակալի վրա
Փորձառու թրծված մարզիկ
Նամակների ժողովածու
«... արքա» Ֆրանսիացի բժիշկ
Անարատ
«Մեծ ... զավակները»
Ֆիզիկոս Աբրահամ ...
Իպոլիտ ... Դողէրոցք
Ծառի, թփի բարակ ճյուղ
Մզկիթին կից աշտարակ
Ինքնաթիռ
Գետ, Սիբիր
...յան վազք Ցորենը կալելու տեղ
Հայկական կոնյակ
Բաշմետ
Չեզոք գազ
Հորթ, գառ
Հայկ. իմաստուն դիցուհի
Ասիական օղի «Ձորի ...ն»
Մարոյի ամուսինը ... Գիբսոն
«Ժիգուլի»
Լեռներ, Միջ. Ասիա Կորիզապտուղ
Պայծառուութ. հնացած միավոր
Հանքանյութ
Վրեժխնդրության զգացում
Հնդկաստանի պետ. գործիչ
Փոքր ռեստորան Նելսոն ...
Հավաքական Ազնավուր, Բրել
... Ֆորման

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

### Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

## Աստղագուշակ

20.12 – 26.12

**Խոյ** - Կարեւոր է ժամանակը ապարդյուն չվատնել, շատ բան կախված կլինի ձեր գործելու ունակությունից:

**Ցուլ** - Պետք չէ կարծել, որ նպատակներին կհաջողվի արագ ու հեշտությամբ հասնել:

**Երկվորյակ** - Կյանքի կոչեք համարձակ գաղափարները, որոնք ձեզ հանգիստ չեն տալիս:

**Խեցգետին** - Հնարավոր են խնդիրներ այնտեղ, որտեղ չեք ակնկալում: Ջանքեր գործադրեք, որպեսզի կարգավորեք իրավիճակը:

**Առյուծ** - Շատ բան կախված կլինի այն բանից, թե որքան արագ կարող եք շտկել ձեր սխալները:

**Կույս** - Բարենպաստ ժամանակ է աշխատանքի եւ ուսման համար: Հնարավորություն կունենաք ստանալ օգտակար տեղեկություններ:

**Կշեռք** - Պետք է կարեւոր որոշումներ կայացնեք՝ ունենալով նվազագույն ինֆորմացիա: Հասկանում եք, որ շատ բան վտանգված է:

**Կարիճ** - Ձեզ սպասում են հաճելի անակնկալներ եւ հաջող զուգադիպություններ:

**Աղեղնավոր** - Գործերի ուշացումը խանգարում է ժամանակին սկսած գործը ավարտին հասցնել, իսկ հուսալի մարդիկ ոչ միշտ են ձեզ աջակցում:

**Այծեղջյուր** - Ամեն ինչ այնքան պարզ եւ հեշտ չէ, որքան կցանկանայիք: Ստիպված եք պայքարել լուրջ մրցակիցների եւ սեփական թուլությունների դեմ:

**Ջրհոս** - Պետք չէ հույս ունենալ, որ կլուծեք բարդ խնդիրները: Հանգամանքները կարող են չափազանց անհաջող լինել:

**Ձուկ** - Կարող եք շատ բան փոխել դեպի լավը, եթե այն արդյունավետ սկսեք: Մի հետաձգեք գործերը, փորձեք հասնել լավագույն արդյունքի:

## Փորձեք լուծել

**Խնդիր N1**



**Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից**

**Խնդիր N2**



**Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից**

**Նախորդ խնդիրների պատասխանները**

Խնդիր N1 1.f4-g5 h4:b6 2.a7:a3x

Խնդիր N2 1.d2-c1 b2-a1 2.c1-b2 a1:g3 3.h2:f4x

Պատրաստեց
**Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ**
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

## Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 19.12.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: